Մարդու պապիլոմավիրուսային վարակի (ՄՊՎ) դեմ պատվաստանյութ

Աղջիկների կողմից հաճախակի տրվող հարցեր

Հարց. Ի՞նչ է ՄՊՎ-ն և ինչո՞ւ ես պետք է պատվաստվեմ դրա դեմ

Պատասխան. Մարդու պապիլոմավիրուսը կամ ՄՊՎ-ն տարածված վիրուս է, որը փոխանցվում է սերտ շփման միջոցով, այդ թվում նաև սեռական ճանապարհով: Առկա է վիրուսի 200-ից ավելի տեսակ, որից 30-ը փոխանցվում է սեռական ճանապարհով:

ՄՊՎ վարակը կարող է մի քանի տեսակի քաղցկեղի և սեռական գորտնուկների զարգացման պատճառ հանդիսանալ: Արգանդի պարանոցի քաղցկեղը ՄՊՎ-ով պայմանավորված քաղցկեղների առավել տարածված տեսակներից է, որն ամբողջ աշխարհում 4-րդ ամենատարածված քաղցկեղն է կանանց շրջանում:

ՄՊՎ-ի դեմ պատվաստումն էապես նվազեցնում է ՄՊՎ-ով պայմանավորված վարակների և լուրջ հիվանդությունների ձեռքբերման ռիսկը: Ապացուցված է, որ ՄՊՎ-ի դեմ պատվաստումներն անվտանգ են և արդյունավետ:

Հարց. Ի՞նչ կպատահի, եթե չպատվաստվեմ ՄՊՎ-ի դեմ

Պատասխան. Չնայած ՄՊՎ վարակներից շատերը (մոտ 70-90%) ինքնաբերաբար վերանում են, սակայն որոշ դեպքերում վիրուսը կարող է մնալ օրգանիզմում և առաջացնել տարբեր հիվանդություններ, նախաքաղցկեղային վիճակներ, իսկ հետագայում՝ տարիներ և անգամ տասնամյակներ անց քաղցկեղ: Առկա են ՄՊՎ-ի մի քանի տեսակներ և մեկ տեսակից ազատվելով՝ անձը կարող է ապագայում նորից վարակվել ՄՊՎ-ի մեկ այլ տեսակով: ՄՊՎ-ով պայմանավորված առավել տարածված հիվանդությունն արգանդի պարանոցի քաղցկեղն է, սակայն վիրուսը կարող է առաջացնել նաև արտաքին սեռական օրգանների, կոկորդի և շնչափողի քաղցկեղ, ինչպես նաև սեռական գորտնուկներ:

Հարց. Նպատակահարմա՞ր է արդյոք 14 տարեկանից բարձր տարիքի աղջիկների պատվաստվելը

Պատասխան. Այո, պատվաստվելը նպատակահարմար է, սակայն պատվաստանյութի արդյունավետությունը կախված է Ձեր տարիքից և Ձեր մոտ ՄՊՎ-ի առկայությունից:

Ձեր օրգանիզմի՝ պատվաստանյութի նկատմամբ իմունային պատասխանն ավելի ուժեղ կլինի, եթե պատվաստվեք առաջարկվող տարիքում և ավելի ճիշտ կլինի, եթե ՄՊՎ-ի դեմ պատվաստվեք նախքան սեռապես ակտիվ դառնալը՝ համոզված լինելու, որ դեռ չեք ենթարկվել ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութում առկա տեսակների

ազդեցությանը: Այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տվել, որ մինչև 45 տարեկան անձանց շրջանում պատվաստումներն անվտանգ և արդյունավետ են ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութում առկա ցանկացած տեսակի նկատմամբ, որոնցով վերջիններս չեն վարակվել մինչև պատվաստվելը:
Սա է պատճառը, որ որոշ երկրներում պատվաստումներն իրականացվում են նաև առաջարկված տարիքային խմբից բարձր տարիքային խմբի անձանց շրջանում: Հիշե՛ք, որ եթե ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութի առաջին դեղաչափը ստանում եք 15 տարեկանից հետո, անհրաժեշտ է ոչ թե 2, այլ 3 դեղաչափ՝ ապահովելու ամբողջական պաշտպանություն:

Հարց. Իմ ընտանիքում ոչ ոք չի ունեցել արգանդի պարանոցի քաղցկեղ: Նպատակահարմա՞ր է արդյոք իմ պատվաստվելը

Պատասխան. Այո, նպատակահարմար է: Արգանդի պարանոցի քաղցկեղը ժառանգական հիվանդություն չէ: Եթե Ձեր ընտանիքում չկան այդ հիվանդությամբ տառապող անձինք, դա չի նշանակում, որ հիվանդությունը չի զարգանա Ձեր մոտ:

Հարց.Ես ունեմ քրոնիկ հիվանդություն: Կարո՞ղ եմ պատվաստվել

Պատասխան. Հիմնականում, այո: Այնուամենայնիվ ճիշտ կլինի ռիսկերն ու արդյունքները քննարկել բուժաշխատողի հետ:

Հարց.Ցավո՞տ է արդյոք պատվաստումը

Պատասխան. ՄՊՎ-ի դեմ պատվաստանյութի ներարկումը նման է բոլոր մյուս ներարկումներին: Ներարկման տեղում առաջին ժամերին, մինչև մեկ օր տևողությամբ կարող է լինել արտահայտված ցավ:

Հարց. Մարմնի ո՞ր հատվածում է կատարվում պատվաստումը

Պատասխան. ՄՊՎ-ի դեմ պատվաստումը կատարվում է բազկի վերին դրսային հատվածում՝ միջմկանային: Գրեթե բոլոր պատվաստումների համար ներարկումը կատարվում է մարմնի հենց այդ հատվածում: